մաղթանք կատարելով և Դրիգ. քահ. Գորգեան աւուր պատշաճի՝ մի քարոզ անելուց յետոյ ամէն բան կարծես վերջացած համարեց։ Սակայն մի կողմից ժողովրդի մի մասը սկսեց ցրուել, միւս կողմից էլ մէկէլ մասը հաւաքուեց Լուսաւորչի դպրոցի դահլիճը, որ զարդարուած էր և Ս. Սահակի ու Մեսրոպի պատկերներն էին կախուած։

Այդ օրը մի տեսակ խառնփնթորութիւն էր տիրում, ոչ կարգ կար և ոչ կարգադրիչ։ Երբ ժողովուրդը սպասողական դրութեան մէջ էր, և ոչ ոք էլ չգիտէր, թէ ինչ պէտք է անել, դպրոցի ուսուց. պ. Բալասանեան ստիպուած բեմ բարձրացաւ և մի հիմտալի ճառով խօսեց տառերի և տպագրութեան նշանակութեան մասին։ Նրա բանախօսութիւնը հաճելի տպաւորութիւն թողեց հասարակութեան վրայ։ Պ. Բալասանեան ի միջի այլոց, ասաց, որ իբր հոգաբարձութիւնն ասել է, թէ այս տօնը մենակ ինքը հոգաբարձութիւնը պիտի կատարէ. այդ պատճառով էլ ոչ ոք չի մտածել յոբելեանը շքեղ կատարելու մասին, թողնելով այդ բանը կղերին. իսկապէս չափազանց հետաքրքրական մի հանգամանք էր այդ, որ պարոնը բացարձակ յայտնեց ամենքի առաջ։ Ցանկալի կը լինէր, որ պ. Բալասանեանը պարզաբանէր այդ հանգամանքը աւելի մանրամասնաբար։

Այսպիսի մի համազգային տօնի, որ հարիւրաւոր տարիների ընթացքում մի անգամ է կատարւում միայն, չէին հրաւիրուած այլազգիներից և ոչ ոք։ Սա էլ իր կողմից ցաւալի երևոյթ էր։ Աւելի լաւ չէ՞ր լինել, որ 1500 և 400 տարիների յոբելեանները այսպիսի խղճուկ դրութեամբ հրապարակ չգային։

Յ. Երիցեան

—

## ՌՈՍՏՈՎ-ԴՈՆԻ ՎՐԱՅ

Իգմիրլեան Հ. Բ. Ընկերութիւնը ստացել էր հրաւիրագիր Մեծ Տօնի մասին։ Ընկերութիւնը ունեցաւ արտաքոյ կարգի նիստ և օր առաջ ուղարկեց իր գրաւոր ուղերձը հանդէսի առթիւ։ Միևնոյն ժամանակ խորհուրդը ընտրեց իր ներկայացուցիչը յանձին հայր Ջէօրեքչեանի։ Որոշուեց առանձին գրական երեկոյթով պատուել թարգմանիչների յիշատակը և Ռոստովի հայ գաղութին յայտնի կացուցանել Մեծ Տօնի նշանակութիւնը։

— Հայոց Գրական Ընկերութեան կոչը, ուղղուած հայ հասարակութեան, սրտալի ընդունելութիւն գտաւ Ռոստովում։ Շատերը առանձին-առանձին ուղարկելու են իրենց դրամը գրական ֆոնդի օգտին։

Սմբատ

—

## Ս Ո Ւ Ր Ա Մ

Շաբաթ, ամսիս 12-ին, Համազգային Տօնի առթիւ տեղիս եկ.-ծխ. երկդ. երկսեռ դպրոցի դահլիճում կայացաւ աշակերտական հանդէս։ Հանդէսը բացեց գործակալ Յովսէփ քահ. Առիւծեան «Հայր մերով», որից յետոյ ուսուցիչ պ. Միքայէլ Բալայեան աշակերտութեան համար մատչելի լեզուով խօսեց օրուայ նշանակութեան մասին, նկարագրելով տառերի գիւտը և այն մեծ ծառայութիւնը, որ ս. Մեսրոպ և ս. Սահակ մատուցել են հայ ազգին։ Գ. Մ. Բալայեան դպրոցի սաներից պատրաստել էր երգեցիկ խումբ, որի երգած կտորները աջող էին և արժանացան բուռն ծափահարութեան։

Հանդէսից յետոյ հայր Առիւծեանը ի դիմաց դպրոցի հոգաբարձութեան, ուսուցչական խմբի և տեղիս հայ ազգաբնակութեան հեռագիր ուղարկեց Էջմիածին շնորհաւորելով համազգային Մեծ Տօնը։ Երկրորդ օրը, կիւրակի. պատարագից յետոյ կատարուեցաւ հանդիսաւոր հայրապետական մաղթանք և ապա հոգեհանգիստ հայ գրականութեան երախտաւոր հանգուցեալների համար։

***

—

## ՅՈԲԵԼԵԱՆԸ ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Բերլինից հեռագրում են. «Տեղիս թերթերին հաղորդում են, որ հայ գրերի գիւտի և տպագրութեան յոբելեանի տօնակատարութեան ժամանակ Պոլսում ընդհարումներ են տեղի ունեցել ցուցարարների և զօրքերի միջև։ Ընդհարումները լուրջ բնաւորութիւն են ունեցել։ Երկու կողմից էլ կան սպանուածներ և վիրաւորներ»։

Խօսքը, երևի, վերաբերում է Ադաբազարի դէպքին, որի մասին հեռ. գործակալութեան տուած տեղեկութիւնը՝ տպագրեցինք թերթիս նախորդ համարում։

---

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ

—

Խմբագրութիւնս դպրոցական ֆոնդի օգտին ստացաւ Բոլնիս-Խաչէն գիւղի դպրոցի սաներից 2 ր. 92 կ., որով նախկին ստացածների հետ ունինք ընդամենը 107 ր. 92 կոպէկ։